

Բժշկութեան Աղօթք

Փարատեա զցաւս եւ բժշկեա զհիւանդութիւնսս ի ժողովրդենէ քումմէ, Տէր Աստուած մեր, եւ շնորհեա ամենեցուն զկատարեալ առողջութիւն, նշանաւ ամենայաղթ խաչի քով, որով բարձեր զտկարութիւն ազգի մարդկան եւ դատապարտեցեր զթշնամին կենաց եւ փրկութեան մերոյ: Դու ես կեանք մեր եւ փրկութիւն, բարերար եւ բազումողորմ Աստուած, որ միայն կարող ես թողուլ զմեղս եւ մերժել զախտս եւ զհիւանդութիւնսս ի մենջ, որում յայտնի են պետք կարեաց մերոց: Պարգեւիչդ բարեաց, պարգեւեա զառատ ողորմութիւնս քո ի վերայ արարածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից. յորոց հանապազ փառաւորեալ գովի Ամենասուրբ Երրորդութիւնդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:
Ամէն

Փարատի՛ր ցաւերն ու բժշկի՛ր հիւանդութիւնները քո ժողովրդից, Տէր Աստուած մեր, բոլորին կատարեալ առողջութի՛ւն շնորհիր՝ Քո ամենայաղթ խաչի նշանով, որի միջոցով մարդկութեան տկարութիւնը վերցրեցիր եւ դատապարտեցիր մեր կեանքի եւ փրկութեան թշնամուն: Դու ես մեր կեանքն ու փրկութիւնը, բարերար եւ բազումողորմ Աստուած. միայն Դո՛ւ կարող ես ներել մեր մեղքերը եւ մեզանից հեռացնել ախտերն ու հիւանդութիւնները. Քեզ են յայտնի մեր կարիքները: Բարիքներ պարգեւող, առատ ողորմութիւնդ պարգեւի՛ր քո արարածներին՝ իւրաքանչիւրին ըստ իր պետքի, որովհետեւ արարածներիդ միջոցով է միշտ գովաբանում Ամենասուրբ Երրորդութիւնդ. այժմ, միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:
Ամէն